



ՔԱՂԱՅԵՐԵՆ ՏԵՍՈՒՔԻՆ

Վիեննա, 26. Հուն. 1894:

Երկայն ժամանակ չէ որ Բեղզիոյ մէջ ընդունուած է երեսփոխան ընտրելու նոր օրէնքն, որուն հիմը կը կազմէ ընտրողաց համամատական ծայն ունենալը: Այս օրինաց համաձայն՝ շատ հարուստ անձ մ'երեք ծայն ունի, միջին դասակարգի պատկանող կամ՝ շափաւոր հարուստ մ'երկու ծայն, իսկ աղքատն մէկ ծայն: — Այս օրինաց հիման վրայ կատարուած առաջին նոր ընտրութիւնները ցուցուցին, թէ ժողովողեան մեծագոյնն եւ տղամարտ մասն իր կաթողիկէայ հաւատքին հաւատարիմ է եւ կ'ուզէ այնպիսի ներկայացուցիչներ ունենալ, որ իր կրօնն ու շահերը քաջութեամբ պաշտպանեն: — Ամսոյս 21ին կատարուած լրացուցիչ ընտրութիւններով՝ կաթողիկէայ Երեսփոխանաց թիւն եղած է 104, ազատամիտք ունին 19 ծայն, իսկ քնկերկարականը՝ 29:

Ամանային արձակուրդէն ետքը Հունգարիոյ աւագանւոյն ժողովն իր նիստերը սկսաւ Հրեաները քրիստոնէից հաւասար կրօնական մարմին ծանչնալու օրինագծով, որով քրիստոնէի եւ Հրէի մէջ ամենեւին տարբերութիւն պիտի չըլլար, եւ քրիստոնէի մը հրէութիւնն ընդունին ըստ կարի պիտի դիւրանար: Այս օրինագիծը 109 ծայնով ընդդէմ 103ի մերժուեցաւ: Իսկ խառն ամիւնութիւններէ ծնած որդաց կրօնին վերաբերեալ օրինադիւն ընդունուեցաւ:

Ամսոյս 14ին Սերպիոյ երիտասարդ թագաւորը Պուտա-Փէշտ հասաւ, ուր Աստրիոյ Վէնայի. Կայսրն ու Յովսէփ արքեպիսկոսը զինքը դիմաւորեցին շոգեկառքի կայարանը: Իբր երկու օր Փէշտ հիւր մնալէ ետքը՝ 17ին հասաւ Բոցտամ, ուր Գերմանիոյ կայսրը զինքը շոգեկառքէ առնելով Բոցտամի կայս. պալատը տաւալ: Նոյն երկուօրն Կայսրը թագաւորին

սեղան մը տալով՝ անոր կենաց քաժակ առաջարկեց: Աղերսանող թագաւորը պատասխանելով՝ իր շնորհակալութիւնը յայտնեց Կայսրն եւ կայս. ընտանեաց՝ իրեն ցոյց տրուած հիւրամեծարութիւնն համար եւ փափաց յայտնեց որ Գերմանիոյ եւ Սերպիոյ մէջ քարեկամական յարաբերութիւններն աւելի ամիսպնդուին: 20ին Բոցտամէ Փերլին անցնելով՝ թանգարաններն ու քաղաքին նշանաւոր տեղերն, եւ Շարլոթենպուրկի դամբանարանն աչքէ անցուց: Նոյն իրիկունը ժամն ութին նոր պալատան մէջ հրաժեշտի սեղանն տրուեցաւ:

Ճննացւոց ու Ճափոնացւոց պատերազմին նկատմամբ այս ամիս հասած հեռագրալուրերը՝ մտադրութեան արժանի քան մք հաղորդած չեն: Եւրոպեոյ զեռի քով կ'ըսուի թէ Ճակատ մը տրուած է, եւ Ճափոնացիք գետն անցնելով յարձակած են Ճննաց վրայ, սակայն ետ մղուած: Երկու կողման ալ կորուստը մեծ եղած է: Նոյնպէս լուր տարածուած է թէ Քորէայի հիւսիսարեւմտեւ Ճակատ մը տրուած է: Տեղւոյն ու ժամանակին վրայ տեղեկութիւնք կը պակսին:

ԲՈՎԱՆԻԿԱՎՈՒԹԻՒՆ

- ՌԻՍԵՐԵԿՆԵ**
ՌԻԶԳԵԿՆԵ — Սեւ ծովու ոռակարն եզերքը. 326:
ՐԱՆԱՏԵԿՆԵ — Այսբարանական պատկերներ. 329: — Յիւրոցան խորուրդ. 334:
ՏԱՌՍԵԿՆԵ — Նորագիւտ հափեան արձանագրութեան առթիւ. 335:
ՊԱՏՄԵԿՆԵ — Գրանիտաւորիւնի չափը մայրաքաղաք. — Ալքսնտրիոս Վրդիբան: (Գոտեկերաւ) 336:
ԳՐԵԿՆԵ — Ազգայն հրատարակութիւնք 1893 տարւոյ. 341: — Առ Կորնթացի երրորդ անվանական թուղթը. 346:
ԱԶԳԵԿՆԵ — Սուրբ Սարգիս. 350:

- ՍԵԼԵԿՏԻՎ**
ՄԱՆՐԱՎՈՒՐԻՔ Հեռախօսի հաղորդակցութեան գիւրնարար: — Կրթիկոսի ջրանցք. 354:
ՏԵՏԵԿՆԵ — Մագրուրիւնամբ ըստ Քնայի. 354:
— Հայաւարանութիւնը Քալիֆոռնիոյ մէջ. 355:
ՆՈՐԱՎՈՒՐԻՔ — Նորագոյն կանոնք: — Գաղղիոյ տաքածութիւնը: — Խօսող ժամայրոց. 355:

ՔԱՂԱՅԵՐԵՆ ՏԵՍՈՒՔԻՆ. 356:

ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՆՈՒՄԱՆՈՒՅԻ ՆՍՐԱՎԱՐԻ
Հ. ԲԱՓԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆՉ

ՎԻԵՆՆԱ. ՄԻԹԵՐԱՐԵՆԱ. 8 ՊԱՐՈՆՉ.